



Հակոբ Պարոնյան

Ազգային ջոշեր

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԻՓԵՔՃԵԱՆ

Այն օրն, ուր առաջադրեցի այս դաստիարակին կեանքը գրելու՝ ինքզինքիս հարցուցի.

Իրա՞ւ է թէ Աստուած անպէտ բան մը կամ էակ մը շտեղծեց աշխարհիս վրայ:

Եթէ իրաւ է, պատասխանեցի ես ինձի, այս մարդն ի՞նչ գործ ունի աշխարհիս վրայ: Եթէ իրաւ չէ՝ ինչո՞ւ այս մարդն պիտանացու ըլլալու համար Թեոդոսիայէն Աիմֆերոբոլ կ'երթայ, Սիմֆերոբոլէն Ռոսթով, Ռոսթովէն Եքաթերինոտար, Եքաթերինոտարէն Պոլիս, Պոլիսէն Պեշկեթաշ, Պեշկեթաշէն Սամաթիա, Սամաթիայէն Խասգիդ, Խասգիդէն Գերմանիա, Գերմանիայէն Պոլիս, Պոլիսէն Իզմիր, Իզմիրէն Իսկիտար կ'անցնի:

Քանի մը վայրկեան ճակատս շփելէն ետքը համոզուեցայ, որ Աստուած արդարեւ անպէտ բան կամ էակ չէ ստեղծած աշխարհիս վրայ. իրաքանչիւրն իր գոյութեան պատճառն ունի: Օրինակի համար՝ Խասգիդի շոգենաւերն ստեղծած է մահկանացուներս համբերութեան վարժեցունելու համար, թղթադրամն եւ պղինձը հանած է հասկցունելու համար մեզի, թէ ինչ որ սկիզբ ունի՝ վերջ ալ ունի. անգործներն ստեղծած է, որպէսզի զբօսարաններու տէրերն առուտոր ընեն եւ ստակ վաստկին. լուսինը ստեղծած է, որ Բերայի կագերն երբ մարին՝ փողոցները լուսատրէ, որպէսզի գողերը մութին մէջ սխալ տուն չմտնեն. խմբագիրներ ստեղծած է, ցոյց տալու համար՝ թէ մարդս չէ կարող իր ճակտին քրտինքովը ապրիլ. չափազանց անձնանուէրներ ստեղծած է՝ գողերու վրայ քեզի

գաղափար տալու համար. երկաթեայ կամուրջ մը տուած է, հասկցնելու համար՝
թէ ներկայ դարուս մէջ անհնար է երկու օձիքը մէկ տեղ բերել. դասատուներ
ստեղծած է՝ բժիշկներու սորվեցունելու համար՝ թէ մարդս քանի՛ ժամ կրնայ
անօրօթեան դիմանալ: Այս ամէնն աղէկ, կ'ըսէք, բայց Իփեքճեանն ինչո՞ւ
համար ստեղծած է: Անշուշտ շրջանակի մը մէջ անցունելով պատէն կախելու
համար չէ: Ինչո՞ւ ուրեմն եկած է աշխարհ: Մի՛ բարկանաք, բարեկամ, աշխարհ
ըսածդ վարժարան չէ, որ մեր գործին չես գար ըսենք ու ճամբենք: Համբերեցէք,
հարկաւ նպատակի մը համար եկած պիտի ըլլայ: Ի՞նչ է նպատակը: Քանի մը
վայրկեան ճակատ շփելն բաւական է գմեգ համոզելու համար, որ Աստուած
Իփեքճեանի կեանք տալով ուզած է հասկցունել գմեգ, որ դաստիարակութեան
մասին մենք տակաւին շատ ետ մնացած ենք. եթէ այսպէս չըլլար՝ թող չէինք
տար անշուշտ, որ դաստիարակ մը աշխարհիս չորս կողմը պտտիլ ստիպուի
ապրելու համար: Չափազանցութիւն չէ ըսածս, մտիկ ըրէք:

Առանց ուրիշի խորհուրդ հարցնելու՝ այս մարդն 1843-ին ելաւ աշխարհ եկաւ:
Բարի եկաւ, հագար բարի, սակայն մարդս քաղաք մը, գեղ մը երթալ ուզած
ժամանակն անգամ նախ ծանօթութիւն կը հաւաքէ եւ վերջը կ'երթայ, ո՛ր մնաց
աշխարհն, որու վրայօք հագիւ չորս հոգի կը գտնուի նպաստաւոր տեղեկութիւն
տուող: Իփեքճեան եթէ այն ժամանակի դաստիարակներէն խորհուրդ խնդրէր՝
շատ հաւանական էր, որ աշխարհ գալու նպատակէն հրաժարէր: Վասն զի այն
ատենները գիշեր մը քանի մը ամիրաներ իրենց փորն կշտացնելէն ետքը կ'ուզեն
իմանալ, թէ Ենովք եւ Եղիա ի՞նչպէս կ'ապրին, ի՞նչ կ'ուտեն երկինք: Ամիրային
մէկը կ'ըսէ, թէ կարկանդակ կ'ուտեն, միւսը այս կերակուրը հերքելով՝ հնդկահաւ
կ'ուտեն, կ'ըսէ: Վիճաբանութիւնը կը սաստկանայ եւ հարկ կ'ըլլայ գիշեր ատեն
պատուելի մը կանչել եւ անոր կարծիքն առնել: Պատուելին կու գայ եւ երբ իր
կարծիքը կը հարցուի՝ կը պատասխանէ.

Չէք հարցուներ, թէ ձեր փողոցին մէջ նստող պատուելին ի՞նչպէս կ'ապրի, եւ
կ'ելնէք Ենովք եւ Եղիային ինչպէս ապրիլը կ'ուզէք իմանալ:

Աւելորդ է ըսել, որ նոյն գիշերն անօթի պառկած էր պատուելին, եւ
բնականաբար նպաստաւոր պատասխան մը չպիտի տար Իփեքճեանի, եթէ աս
իրմէ տեղեկութիւն ուզէր: Այս չըրաւ եւ չընելէն ետքը յանձնարարական թողթ

մ'ալ չատաւ: Վա՛յ այն պարկեշտ ուսումնականներուն, գործունեաներուն եւ աշխատասէրներուն, որ յանձնարարող մը չունին, սողալով պիտի սողան գետնի վրայ... Երանի՛ այն տգէտներուն, որ յանձնարարողներ ունին կամ երեւելի շէնքերու վարչութեան տնօրէններ կ'ըլլան, կամ առատ թոշակներ կ'ընդունին ու խելացիները ծաղրելով պատուական կեանք կ'անցունեն... Երանի մտօք աղքատաց, զի նոցա է արքայութիւն երկրիս...

Այս առաջին յանցանքները գործելէն ետքը, յանցանք մ'ալ գործեց՝ Թւոդոսիոյ մէջ աշխարհ գալով... որպէս թէ աշխարհիս վրայ ուրիշ քաղաք մնացած չըլլար. թո՛ղ որ այդ քաղաքն իր կարծիքներուն համաձայն ալ չէր: Մանկութեան օրերը հոն անցունելէն ետքը՝ 1852-ի ատենները Սիմֆերոփոլ գնաց եւ հոն վարժարան մտնելով փոխանակ ուսանելու՝ ուսուցանելու արհեստը սորվիլ կ'ուզէր: Համոզեցին զինքն, որ առանց ուսանելու ուսուցանել անկարելի էր, եւ ասոր վրայ սկսաւ իր դասերը պատրաստել եւ ընկերները գերազանցել:

1859-ին վարժարանէն ելաւ եւ Թւոդոսիա դառնալով՝ ուզեց դասատուութեամբ ապրիլ: Դասատուութեամբ ապրի՛լ... հրաշքի դարերն անցած են... դասատուութեամբ մեռնիլ, այս է իրականութիւնը: Քաղաքագէտներն մեծ գործ մը ըրած կ'ըլլան՝ եթէ կախուելու անձերն Թուրքիա դրկեն դասատուութիւն ընելու: Չկրցաւ իր փափաքն գործադրել եւ հարկ եղաւ կտաւի վաճառականի մը քով գրագրութեան պաշտօն վարել: Քանի մը ամիս կտաւ չվաճառելէն ետքը՝ հրաժեշտ տուաւ այդ գործին եւ միտքը դրաւ, որ անպատճառ դասատուութեամբ ապրի:

1864-ին քանի մը ընկերներու հետ միանալով Ռոսթովի մէջ դպրոցի մը հիմնարկութեան աշխատեցաւ եւ չյաջողեցաւ:

1865-ին Երաթերինոտարի մէջ այցելութեամբ դասախօսութիւն ընելու ձեռնարկեց: Այս ձեռնարկութիւնն ալ ի դերեւ ելաւ, եւ Իփեքճեան ստիպուեցաւ Ռուսաստան թողուլ եւ Թուրքիան գրկել: Եթէ դասատուութիւնը թողուր եւ Ռուսաստանը գրկէր՝ անխոհեմ գործ մը ըրած չպիտի համարուէր:

1867-ին Կ. Պոլիս եկաւ: Դասատուի մը աշխարհ գալն, ինչպէս ըսինք, յանցանք մ'է արդէն, իսկ Պոլիս գալն՝ անանկ ծանր յանցանք մ'է, որ բնաւ ներելի չէ:

Իփեքճեան այս մահացու մեղքն ալ գործեց, եւ Ենի-Գաբուի վարժարանը մտաւ՝ տեսչութեան պաշտօնով: Այս անձն պգտիկին վրայ պգտիկ գաղափար ունի, կամ, լաւ եւս, բնաւ գաղափար չունի, կը փափաքի, որ ամէն բան մեծ, փառատը եւ կատարեալ ըլլայ: Գովելի փափաք մ'է այս, բայց տեղին, ժամանակին եւ պարագաներուն յարմարիւն ալ քիչ մը պէտք է: Եթէ կօշկակար մը եղած ըլլար՝ նաւակի մեծութեամբ կօշիկներ պիտի կարէր, թէպէտեւ պոլսեցիներուն մեծ ծառայութիւն մը պիտի ընէր, վասն զի երբեմն փողոցներէ անցնելու համար՝ նաւակի պէտքը զգալի կ'ըլլայ, ինչպէս հոս կորի պէտքը կ'ըլլայ ին ծայրը: Ամիսը տասնըհինգ ոսկի եկամուտ ունեցող վարժարանի մը տնօրէն կարգէ Իփեքճեան Էֆենտին եւ աղաչէ իրեն, որ ծրագիր մը պատրաստէ: Հետեւեալ օրը ծրագիր մը կը հանէ ծոցէն եւ կը սկսի կարդալ.

«Պատի ունեցէք մտիկ ընելու այն ծրագիրն, զոր պատրաստելու համար աղաչեցիք մեզի:

Ա. Նկատելով՝ որ դպրոցին շէնքն աւելի ախտոյ ձեռքով շինուած է քան թէ դաստիարակութեան շէնքի մը ձեռքով, կը խնդրեմ, որ նախ այդ դպրոցը փլցունէք եւ նորէն շինէք, այն ձեռքով՝ որուն օրինակը Գերմանիայէն բերել տուած եմ: Այդ շէնքին մէջ անկարելի է տղայ դաստիարակելը.

Բ. Ճեմիշները վերցունելու է դպրոցին քովէն եւ քաղաքէն դուրս տեղ մը դնելու է.

Գ. Նկատելով՝ որ կլիման վնասակար է, կը խնդրեմ, որ Հոգաբարձութիւնը արժանը տնօրինէ քաղաքիս կլիման փոխելու համար.

Դ. Վարժարանն ամիսը հարիւր ոսկոյ պէտք ունի եւ Հոգաբարձութիւնը կարող է, եթէ ուզէ, ժողովուրդէն հաւաքել այդ դրամը.

Ե. Եթէ այս առաջարկութիւնները կ'ընդունիք՝ լաւ, եթէ ոչ՝ մնաք բարեալ»:

Այս տեսակ ծրագիրներով կը փափաքի Գերմանիայի վարժարաններու հաւասար ընել այն վարժարանն, որ իւր տնօրինութեանը տակ առած է: Յայտնի է, թէ այսպիսի ծրագիրներն ո՛րչափ ընդունելութիւն կը գտնեն անանկ ժողովրդէ մը, որ տնօրէնի մը տրուած ամսականը ծովը նետուած ստակ կը համարի:

Իփեքճեան չուզեր ծրագրին մէջ թիւն վերջաւորուած խել մը ուսումներ եւ գիտութիւններ շարելէն ետքը՝ զանոնք աշակերտներուն շտրվեցունել եւ, հետեւապէս, անոնց ծնողքը խաբած ըլլալ: Ամէն բան առաջուց կ'իմացունէ, որպէսզի ապագային մէջ պատասխանատութեան տակ չմնայ: Նոյնիսկ պարգեւաբաշխութեան օրերն ալ՝ որք ծնողքներ խաբելու յատուկ օրեր են, բնաւ սուտ չխօսիր. յայտնապէս կ'ըսէ, թէ Թորոսը տկար է, Կիրակոսը ծոյլ է, մինչդեռ ժողովրդեան հաճելի ըլլալու համար պէտք էր ըսել, որ, փառք Աստուծոյ, վարժարանիս բոլոր աշակերտները յառաջադէմ են, եւ կը յուսամ, որ գալ տարի փիլիսոփաներու յորդ առատութիւն մը պիտի տեսնենք: Վարժարանի տնօրէնի մը համար քիչ մը ստախօսութիւն եւ քիչ մ'ալ շողորթութիւն անհրաժեշտ պէտք է, եւ այն տնօրէնն, որ այս երկու առաքինութիւններէ գուրկ է, անպատճառ օր մը հեռանալ պիտի ստիպուի այդ ասպարէզէն: Ասկից գատ, Իփեքճեան հոգաբարձու էֆենտիներու հետ վարուելու եղանակն ալ չգիտեր: Հոգաբարձու մը կ'ուզէ, որ տնօրէնն իր առջեւ բարեւ մը բռնէ, սիկարային կրակ բերէ. եթէ փողոցի մէջ հանդիպի հոգաբարձուի մը, որ միս ի ձեռին կ'երթայ, միսն ինք առնելու եւ տուն տանելու է: Այսպէս չվարուեցա՞ւ... ա՛լ ականջները հոգաբարձուներուն բերանին մօտեցնելու է.

Ի՞նչ ըսել է, էֆենտիմ, ան տիրացուին խօ՞սքը պիտի ըլլայ:

Իրաւունք ունիք, առջի օրը դպրոց մտայ, տեղէն չերերաց, կարծես ան մեզի ամսական կու տայ:

Շատ ճշմարիտը խօսեցաք, ազգին ստակովը կ'ապրին... եւ հոգաբարձուներուն հրամայել կ'ուզեն:

Վռնտելու է այդ մարդը, վռնտելու է:

Այո՛, այո՛... ծօ տնտես, գնա պատուելիին ըսէ, որ մէյ մ'ալ դպրոց ոտք չկոխէ:

Հարկ չմնար ա՛լ երկար բարակ բացատրելու, թէ Իփեքճեան ինչո՛ւ երկար ատեն չկրցաւ մնալ Պոլսոյ թաղային վարժարաններուն մէջ:

1871-ին Շահ-Նուպարեան վարժարանին Տեսչութիւնն ստանձնեց: Յիշեալ վարժարանն, որ Իփեքճեանի փափաքներն իրականացնելու շափ եկամուտ ունէր, կանոնաւոր կերպով շարունակեց եւ ուսեալ աշակերտներ ալ դուրս տուաւ, որչափ ատեն որ եկամուտ ունեցաւ: Շատ մը դասատուներ, որոնք շաբաթն երեք անգամ գալու պարտաւոր ըլլալով՝ մէկ անգամ կու գային վարժարան, թշնամի եղան Իփեքճեանի, որ ճշտութիւն պահելու թերութիւնն ալ ունէր: Իրեն համար օրակարգ մը պատրաստած էր եւ անոր համեմատ կը շարժէր. ելնելու, պառկելու, ճաշելու, խօսելու, խորհելու, լալու, խնդալու եւ փոնգտալու յատուկ ժամեր որոշած էր. եւ այս կարգապահութիւնն իրեն թշնամիներ կը յարուցանէր:

Այն ատեններն էր, որ դաստիարակութեան սահմանի կռիւ մը բացուեցաւ լրագիրներու մէջ: Մէկն էլաւ եւ Մանգումէի Էֆքեարի մէջ հարցում մը ըրաւ, թէ ի՞նչ է դաստիարակութեան սահմանը: Իփեքճեան խնդաց: Այս հարցումը պարապ բան մ'էր, վասն զի դաստիարակութեան սահմանը չգիտցող դաստիարակ միսկ չկրնար դաստիարակ ըլլալէ դադրիլ: Այսչափ մարդ կայ աշխարհիս վրայ, միթէ ամենն ալ մարդկութեան սահմանը գիտե՞ն, ո՛չ, բայց եւ ոչ մին մարդ ըլլալէ դադրած է:

Այս հարցումը կը յիշեցունէ մեզ Մովսէսի «Քաղաքացին ազնուական» ի հետեւեալ տողերը.

ՄՈՆՍԻՈՅ ԺՈՒՐՏԵՆ

Մտերմաբար բան մը պիտի յայտնեմ ձեզի: Ազնուականի մը սիրահարած եմ եւ կը փափաքիմ, որ օգնէք ինձ գրելու սիրատունս մը, զոր իրեն ոտներուն տակը պիտի ձգեմ:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Գլխուս վրայ:

ՄՈՆՍԻՈՅ ԺՈՒՐՏԵՆ

Բայց սքանչելի բան մը ըլլալու է:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Յայտնի է: Ոտանաւոր կ'ուզէք գրել:

ՄՈՆՍԻՏՅՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ

Ոչ, ոչ, ոտանաւոր չեմ ուզեր:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Ըսել է, որ արձակ կ'ուզէք:

ՄՈՆՍԻՏՅՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ

Ոչ, ոչ, ոչ արձակ կ'ուզեմ, ոչ ալ ոտանաւոր:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Սակայն պէտք է, որ կամ մին ըլլայ կամ միւր:

ՄՈՆՍԻՏՅՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ

Ինչո՞ւ համար:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Պատճառն սա է, որ մեր միտքը բացատրելու համար կամ արձակ գրելու է կամ ոտանաւոր:

ՄՈՆՍԻՏՅՈՒՆ ԺՈՒՐՏԵՆ

Արձակէն ու ոտանաւորէն զատ բան չկա՞յ:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Ոչ, պարոն, այն որ արձակ չէ՝ ոտանաւոր է, եւ այն որ ոտանաւոր չէ՝ արձակ է:

ՄՈՆՍԻՈՅ ԺՈՒՐՏԵՆ

Մեր խօսածն ի՞նչ է ուրեմն:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Արձակ է:

ՄՈՆՍԻՈՅ ԺՈՒՐՏԵՆ

Ի՞նչ կ'ըսէք. օրինակի համար՝ եթէ ըսեմ, «Նիկոլ, սա մուճակներս եւ գիշերուան գդակս բեր», արձա՞կ է սա:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Արձակ է:

ՄՈՆՍԻՈՅ ԺՈՒՐՏԵՆ

Չըսե՞ս, որ քառասուն տարիէ ի վեր արձակ կը խօսիմ եղեր եւ դեռ այսօր կ'իմանամ...:

Չարմանալու բան չկայ. միթէ այսօր չկա՞ն խմբագիրներ, որ սխալ կը գրեն, առանց զգալու իրենց սխալը:

Ըստ իս մարդ մշակելու եւ ըստ ուրիշներու մարդուս միտքը, սիրտն ու մարմինը մշակելու արհեստն Իփեքճեան Էֆենտին քանի մը տարիներ Շահ-Նուպարեան վարժարանի մէջ գործադրելէն ետքը՝ հրաժարեցաւ այդ շէնքէն, որուն հասոյթները ցամքիլ սկսած էին: Մեկնեցաւ Պոլսէն եւ Լոզան գնաց ու հոն յայտարարութիւն մը հանեց, որ յարմար գնով յանձնատու կ'ըլլայ Թուրքիայէն, եւ ոչ ուրիշ կողմերէ, հոն դրկուելիք տղաներու դաստիարակութեանը: Այս գործն ալ չկրցաւ գլուխ հանել եւ ստիպուեցաւ դառնալ Պոլիս, ուսկից Իզմիր գնաց եւ հոն ալ իւր հրաժարականը տալով՝ նորէն Պոլիս դարձաւ եւ Իսկիւտար Սելամիէի միացեալ վարժարանին տնօրէն անուանուեցաւ:

Իփեքճեան Էֆենտին մանկավարժութեան մէջ գերմանական դրութիւնն կը սիրէ այնպէս՝ ինչպէս կը սիրեն ես սիսեռով միսը, եւ կը սիրես դուն ձեռով լուրիան: Այս դրութիւնը շատ յարմար է տարուան մը մէջ թաղային վարժարան մը հագար հինգ հարիւր ոսկի պարտական ընելու: Մեր ըսածը քանի մը տարիներ առաջ փորձով հաստատեց Իսկիտարու Սելամիէի վարժարանն, որուն հոգաբարձութիւնն Իփեքճեան Էֆենտիէ աւելի գերմանասէր էր: Այս դրութիւնը խիստ կտրուկ է, վարժարանն կամ կը բարձրացունէ կամ կը կործանէ: Իփեքճեան Էֆենտին եթէ քիչ մը խոնարհէր եւ թաղային վարժարաններն երկրորդական աստիճանի վերածելու դիրութիւններ տուող ծրագիր մը պատրաստելու գիշանէր, ազգին մեծ ծառայութիւն մը ըրած պիտի ըլլար: Մենք կը կարծէինք, որ ժողովուրդը եւ վարժարաններուն եկամուտները քննելէն ետքը՝ գլուխը պիտի փոխէր. բայց մեծ եղաւ մեր գարմանքը, երբ տեսանք, որ գլուխը փոխելու տեղ գլխարկը փոխած է: «Պարապ բան է, բարեկամ, կ'ըսէ Իփեքճեան, ինչ որ ալ ընես, այս ազգը դպրոցի համար դրամ չտար, կ'ուզէ որ իւր տղաները ձրի կարդան»: Իրաւունք ունի, սակայն քիչ մը գոհողութիւն ընելով՝ ժողովուրդը ծանօթացնելու է իւր պարտքերուն:

Իբրեւ երեսփոխան ալ ազգին ծառայած է. երկաթեայ ականջ ունենալու է մէկը, որ դիմանայ անոր ատենաբանութիւններուն: Շատ խօսելու համար մրցումի կ'ելնէր ուրիշ երեսփոխաններու հետ, եւ շատ անգամ մրցանակն կը վաստկէր: Իւր կարծիքներն երբեք ճնշման տակ չեն իյնար, կը խօսի ազատօրէն, ինչ որ կը խորհի ազգին օգտին համար: Անձնական շահն, որ շատ անգամ մեր երեսփոխաններէն մէկ քանիները կը ստիպեն լռել, բնաւ ազդեցութիւն չկրնար ունենալ իւր վրայ. ամէնէն հարուստին մէկ անքաղաքավարութիւնն անոր երեսը գարնելէ չհրաժարիր՝ մինչեւ անգամ չորս հագար ոսկիով աղջիկ մը տալ խոստանաս իրեն: Շատերը կը կարծեն, թէ կիրքով կը խօսի, ես կը հաւատամ, որ կիրքով կը խորհի եւ պաղարեամբ կը խօսի:

Հրապարակի վրայ ունի գրութիւններ, որոնք ողջմտութիւն կը բուրեն: Ոճը խոնարհ բնաւորութիւն մը չունի: Անգամ մը իրաւամբ յարձակեցաւ Մամբրէ եպիսկոպոսին դէմ, որ պատասխանեց՝ թէ կրօնատրի դէմ յարձակիլն կրօնի դէմ յարձակիլ է: Աս ճշմարիտ է, եւ ասոր համար է, որ երբ Մամբրէ եպիսկոպոս հարբուխ ըլլայ՝ կրօնքին ալ քիթը կը վագէ:

Իփեքճեան Էֆենտին, ինչպէս տեսնուեցաւ կենսագրութեանս մէջ, աւելի գեղեցիկ՝ քան տգեղ կողմեր ունի. սակայն իւր դէմքը գեղեցկութեան մասին միւս բոլոր յատկութիւնները կը գերազանցէ: Փողոցի մէջ այնպիսի սիգաճեմ քալուածք մ'ունի, որ մարդս կը վախնայ անոր ետեւէն երթալու, իրեն սպասաւորն կարծուելու համար: